

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ 25-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Քսանդհինգ տարիներ առաջ խումբ մը գաղափարապաշտ մարդիկ տեսիլք ունեցան Նիւ Եօրֆ ֆաղափի սրտին վրայ կանգնելու այս կրօնական հոյակապ կառոյցը, որ պիտի ծառայէր ոչ միայն ամերիկահայերու, այլ նաեւ Հայ ժողովուրդի կրօնական հաւատալիքներուն ու արարողութիւններուն բաժնեկից պիտի դարձնէր ամերիկեան համայնքը: Ուրբաթ Մայիս 14ին եւ Կիրակի Մայիս 16ին տեղի ունեցած եկեղեցական մասնաւոր արարողութիւնները կարեւոր տեղ մը գրաւեցին Ս. Վարդան Մայր Տաճարի օծման 25ամեակին նուիրուած շաբաթավերջի հանդիսութիւններուն մէջ:

Ուրբաթ երեկոյեան միջեկեղեցական ներշնչող արարողութեան մասնակցեցան շուրջ երեսունըվեց Հայ եւ ոչ-հայ հոգեւորականներ: Տպաւորիչ թափօրով հոգեւորականները մուտք գործեցին Ս. Վարդան Մայր Տաճար՝ մինչ միացեալ դպրաց դասը, երգեհոնի ընկերակցութեամբ հանրածանօթ արուեստագէտ Պերմ ժամկոչեանի, կ'երգէր «Հրաշափառ» շարականը: Հոգեւորականներու դասը կը գլխաւորէին Ս. Էմիլիանի դիւանապետ Գերշ. Տ. Ներսէս Արք. Պօգապալեան, Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան եւ Գանատայի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան:

Միջեկեղեցական արարողութեան մասնակցող բոլոր եկեղեցիներու հոգեւորականներուն մէջ կը գտնուէին Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Նաֆովոս Արքեպիսկոպոսի օգնական՝ Ֆիլոթէոս Եպիսկոպոս, Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Մեդրոպոլիտ

Թէոտոսիոս, Սուրիական Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Աթանասիոս Սամուէլ Արքեպիսկոպոս, Նիւ Եօրֆի Սէյմք Ճան Տիւ Տիվայն Եպիսկոպոսական Տաճարի երէց՝ Ճէյմզ Մորթըն, Ամերիկայի Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի ընդհանուր ֆարտուղար՝ Տոքթ. Ճոան Գեմպլը:

Մայր Տաճարին մէջ ներկայ էին բարձրաստիճան անձնաւորութիւններ եւ հաւատացեալներու մեծ բազմութիւն մը: Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան իր խօսքին մէջ անդրադարձաւ «Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքին՝ որ այնքան նշանակալից է մեզի համար այսօր, որքան էր 303 թուականին»: «Ս. Վարդան Մայր Տաճարը», ըսաւ ան, «Ս. Էմիլիանի կենդանի խորհրդանիշն է ամերիկեան ցամաքամասին վրայ: Կը կրէ անունը Ս. Գրիգոր Լուսաւորչի շառաւիղէն Վարդան Մամիկոնեան զօրավարին, որ ֆաջաբար ինկաւ ռազմադաշտին վրայ՝ պաշտպանելով իր հաւատքը»:

Ակնարկելով օրուան ձեռնարկի միջեկեղեցական ոգիին, Առաջնորդ Սրբազան Հայրը փափաք յայտնեց որ Ս. Վարդան Տաճարը «շարունակէ ծառայել որպէս Աստուծոյ տունը, ուր բոլոր բրիստոնեանները կարենան հաւաքուիլ Քրիստոսի անունով: Երկար տարիներով գաղութային գործունէութեանց մէջ առաջնակարգ դիրքի վրայ գտնուող Առաջնորդարանի այս համալիրը թող շարունակէ հանդիսանալ խաղաղութեան եւ բարիկամեցողութեան խորհրդանիշը մարդոց միջեւ»:

Երաժշտական Յայտագիր

Միջեկեղեցական արարողութեան

աւարտին, երաժշտական յայտագիր մը գործադրուեցաւ՝ գաղութի անուանի արուեստագէտներուն մասնակցութեամբ: Անիթա Թէրզեան, որ Ամերիկայի եւ Եւրոպայի գլխաւոր թատերասրահներուն մէջ յաջող ելոյթներ ունեցած է, սֆանչելի կերպով եւ իւրայատուկ կարողութեամբ մեկնաբանեց Կոմիտաս Վարդապետի «Կանչէ Կոռնկ»ը եւ «Զինար ես»ը, Ռումանոս Մելիքեանի «Անջատումը» եւ Սայաթ Նովայի «Աննա»յի արիան, ինչպէս նաեւ հատուածներ «Գալալէի Ռուսիֆանա»էն եւ «Սամսոն եւ Տալիլա»էն: Դաշնամուրի ընկերակցութիւնը կատարեց Տէն Ֆրանգլին Սմիթ:

Հակառակ անոր որ յայտարարուած էր, ծանօթ արուեստագէտ Մայքլ Գլըմոյեան անհանգստութեան պատճառաւ չկրցաւ ներկայ գտնուիլ:

Համակրելի ասմունքող Զուարթ Պալըզեան յաջող կերպով եւ ապրումով արտասանեց Վահան Թէֆեանի «Եկեղեցին Հայկական»ը:

Երեւանի Պետական Օփերայի մեներգիչներէն Ալեքսանդր Վարդանեան իր ուժեղ ու տիրապետող ձայնով հատուածներ ներկայացուց Զուլխանեանի «Արշակ Բ.» եւ Տիգրանեանի «Դաւիթ Բէկ» օփերաներէն: Դաշնամուրով ընկերակցեցաւ Գայանէ Աւագեան:

Տասնամեակներով մեծագոյն Նիւ Եորքի թատերասրահներու զարդը հանդիսացող եւ իր արուեստի նարտարութիւնը մասնագիտութեան հասցուցած անուանի երգչուհի Լուսին Ամարա գրաւեց ներկաները իր կատարողական վարպետութեամբ: Դասական երգերէն անկախ, ան ներկայացուց կարգ մը հայկական երգեր. Կոմիտաս Վարդապետի «Տըլէ Եաման»ը եւ «Կոռնկ»ը, Ռուբենեանի «Ուռնիի երգը», եւ իր բաժինը աւարտեց էտկար Յովհաննէսեանի «Երեւան Էրբունի»ով:

Միջեկեղեցական արարողութեան եւ համերգի աւարտին, Առաջնորդարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը: Սեղանը օրհնեց Եթովպական Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ՝ Նսեհակ Արքեպիսկոպոս:

Վեհափառին Կոնդակը

Շաբաթ Մայիս 15ին տեղի ունեցաւ յոբելինական ճաշկերոյթ, իսկ Կիրակի Մայիս 16ին՝ Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուց Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան: Այս առաջին Պատարագը կը համարուէր Մայր Տաճարի Աւագ Խորանի «Ս. Աստուածածնի եւ Մանուկ Յիսուսի» սրբանկարին առջեւ, որ վերջերս պատրաստուած է հայրենի ծանօթ արուեստագէտ Գրիգոր Խանգեանի կողմէ: Այս սրբանկարին օծումը կատարուեցաւ Շաբաթ Մայիս 15ի առաւօտուն՝ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ եւ ներկայութեամբը արուեստագէտին:

Ս. Պատարագի ընթացքին, Ս. Էջմիածնի դիւանապետ Գերշ. Տ. Ներսէս Արք. Պօգապալեան կարդաց Ամենայն Հայոց Սրբազանգոյն Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Հայրապետի Կոնդակը, ուր բարեմաղթութիւններ կը ներկայացուէին, ինչպէս նաեւ զնահատան՝ Թեմի նախկին Առաջնորդ եւ այժմու Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի եւ կնքահայր Հայկ Գալուֆեանի անխոնջ ջանքերուն՝ Մայր Տաճարի ծրագրի իրականացման ի խնդիր: Երուսաղէմի Պատրիարքը շաբաթավերջի յոբելինական հանդիսութիւններու պատուոյ հիւրը պիտի ըլլար, բայց անհանգստութեան պատճառաւ չկարողացաւ ներկայ գտնուիլ:

Մայր տաճարի միացեալ դպրաց դասը դեկավարեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի խմբավար Խորէն Մէլիսանէնեան. երգեհոնով ընկերակցեցաւ Պերճ Ժամկոչեան: Ս. Վարդան Մայր Տաճարի

կնֆահայրերէն ռմանֆ տեղ գրաւած էին առաջին նստարանին վրայ, իսկ հանգուցեալ կնֆահայրերուն ի յիշատակ կատարուեցաւ Հոգեհանգստեան Պաշտօն, որուն ընթացքին երգեցողութեան մասնակցեցաւ Պէյսայտ Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ պատանիներու դպրաց դասը:

Մատաղի օրհնութենէն ետք, ներկայ եկեղեցականներու ու բարձրաստիճան հիւրերու առաջնորդութեամբ հաւատացեալները խմբուեցան շրջափակին մէջ,

ուր մատաղը բաժնուեցաւ. իսկ միացեալ դպրաց դասը կ'երգէր ղեկավար Խորէն Մէլիսանեանի դաշնաւորած նոր երգը, որ նուիրուեցաւ Մայր Տանարի 25-ամեակին:

Այսպէսով վերջ գտան շաբաթավերջի յոբելինական հանդիսութիւնները՝ նուիրուած այն կառոյցին որ ամբողջ քաղաքի դար կեդրոնը հանդիսացաւ գաղութի հոգեւոր ու մշակութային կեանքին:

ՖԼՈՐԷՆՍ ԱԻԱԳԵԱՆ

ԶԱՏԿԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԽՈՐԱՆՔ

Պատրիարք Սրբազան Հայրը Զատկուան եւ Պասեփի տօնական օրերուն առիթով իր բարեմաղթութիւնները եւ շնորհաւորանքի գիրերը յղեց Հոգեւոր եւ Կառավարական պետերուն, որոնցմէ ստացած է բարի մաղթանքներու գիրեր:—

— Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն, Տ. Տ. Վազգէն Առաջին Սրբազնագոյն Կաթողիկոսէն.

— Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսէն

— Հռովմէական Կաթողիկ եկեղեցւոյ Սրբազան Քահանայապետ, Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապէն.

— Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս եկեղեցւոյ Ամեն. Տ. Տ. Ալեքսէյ Բ. Սրբազան Պատրիարքէն.

— Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Գազանեանէն.

— Թեմակալ Առաջնորդներէն, Պետական եւ Ազգային Հաստատութեան ղեկավարներէն.